Երկրորդ ընթերցում
Նախագիծ
Կ-953-21.07.2010-ԱՄ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔ

«ՄԱՐԴՈՒՆ ՕՐԳԱՆՆԵՐ ԵՎ (ԿԱՄ) ՀՅՈՒՍՎԱԾՔՆԵՐ ՓՈԽՊԱՏՎԱՍՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ»
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Մարդուն օրգաններ և (կամ) հյուսվածքներ փոխպատվաստելու մասին» Հայաստանի Հանրապետության 2002թ. ապրիլի 16-ի ՀՕ-324 օրենքի՝

1) 11-րդ հոդվածի առաջին մասի «դ» կետը «վայրում» բառից հետո լրացնել «, բացառությամբ, եթե ռեցիպիենտն ազատազրկված անձի մերձավոր ազգականն է (ծնող, զավակ, ամուսին, քույր, եղբայր).»,

2) 11-րդ հոդվածի վերջում լրացնել նոր մաս հետևյալ բովանդակությամբ. «Ազատազրկման վայրում գտնվող անձից փոխպատվաստման նպատակով օրգաններ և (կամ) հյուսվածքներ վերցնելու պայմանները, ինչպես նաև օրգանը վերցնելուց հետո ազատազրկման վայրում գտնվող անձի բժշկական օգնության և խնամքի մատուցման պայմանները հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹԻԿ

«Մարդուն օրգաններ և /կամ/ հյուսվածքներ փոխպատվաստելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ արված առաջարկությունների մասին

Առաջարկության հեղինակը	Առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունները
1.	2.	3.	4.
ՀՀ Ազգային ժողովի պատգամավորներ Ա. Բաբլոյան, Մ. Մինասյան	Առաջարկում ենք ՀՀ Ազգային ժողովի կողմից առաջին ընթերցմամբ ընդունված «Մարդուն օրգաններ և /կամ/ հյուսվածքներ փոխպատվաստելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածը խմբագրել հետևյալ բովանդակությամբ. 1. առաջին մասի «դ» կետը «վայրում» բառից հետո լրացնել «բացառությամբ, եթե ռեցիպիենտն ազատազրկված անձի մերձավոր ազգականն է /ծնող, զավակ, ամուսին, քույր, եղբայր/»: 2. «Այն դեպքերի համար, երբ կենդանի դոնորը պատիժ է կրում ազատազրկման վայրում, ՀՀ կառավարությունը սահմանում է դոնորից օրգանների ստացման հատուկ կարգ, որով հաստատվում են օրգանների ստացման պայմաններն ու վայրը, ինչպես նաև դոնորի՝ օրգան տրամադրելուց հետո բժշկական օգնության և խնամքի տրամադրման կարգերը»;	Առաջարկությունն ընդունվել է որոշ խմբագրական փոփոխություններով	Օրենքի վերնագրում «լրացում» բառը փոխարինվել է «լրացումներ» բառով, իսկ տեքստում լրացվել է 2-րդ մաս՝ հետևյալ բովանդակությամբ. «Ազատազրկման վայրում գտնվող անձից փոխպատվաստման նպատակով օրգաններ և (կամ) հյուսվածքներ վերցնելու պայմանները, ինչպես նաև օրգանը վերցնելուց հետո ազատազրկման վայրում գտնվող անձի բժշկական օգնության և խնամքի մատուցման պայմանները հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը»

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ՝ Հ. ՔՈՒՇԿՅԱՆ